

Գաղափարական ներքին տարաձայնությունները Վերակազմյալ հնչակյանների հիմնադրման առաջին տարիներին

Մարգարյան Ս. Թ.

առաջատար գիտաշխատող, պրոֆեսոր

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ (Երևան, Հայաստան)

sargsyansuren@yandex.ru

Վճռորոշ բաներ՝ Հնչակյան կուսակցություն, քաղաքական գործիչներ, ազգային-ազատագրական պայքար, վերակազմավորված կուսակցություն, Արփիարյան, Թամատյան, գաղափարական տարբերություններ

Идеологические внутренние разногласия в первые годы после реорганизации партии

Гнчакян

Саргсян С. Т.

Институт истории НАН РА (Ереван, Армения)

sargsyansuren@yandex.ru

Аннотация. Выдающиеся общественные и политические деятели Мигран Таматян и Арpiar Арpiarян одновременно вступили в партию Гнчакяна, призванную организовать и возглавлять армянскую национально-освободительную борьбу.

Будучи западными армянами, они понимали, что идеология социализма была преждевременной в борьбе с отсталой османской действительностью. Совместно с несколькими сторонниками они боролись за исключение этого тезиса из программы партии, и на основе этих разногласий раскололи партию, сформировав новую - реорганизованную партию Гнчакян.

Поскольку Арpiarян считал лучшим методом для этой борьбы публицистику, а Таматян - повстанческие действия вооруженных групп, между ними возникли идеологические разногласия, и они разделились. Жизнь показала, что подходы Таматяна были более оправданными, потому что лучшим способом для объяснения чего-либо туркам всегда была сила.

Ключевые слова. Партия Гнчакян, политические деятели, национально-освободительная борьба, реорганизованная партия, Арpiarян, Таматян, идеологические разногласия.

Ideological internal divisions in the first years after the reorganization of the Hnchakyan party

Sargsyan S. T.

Institute of history of NAS RA (Yerevan, Armenia)

sargsyansuren@yandex.ru

Abstract. Prominent public and political figures Mihran Tamatyan and Arpiar Arpiarian simultaneously joined the ranks of the “Hnchak” Party, which was called to organize and lead the Armenian national liberation struggle.

As Western Armenians, they understood that the ideology of socialism was ill-timed in the struggle against the backward Ottoman reality. Together with several like-minded people, they launched a struggle for the exclusion of this thesis from the Party's program and, separating on the basis of these disagreements, created a new “Reorganized Hnchakyan Party”.

Since Arpiarian considered journalism to be the best method of this struggle, and Tamatyan - the method of armed actions of rebel groups, ideological differences formed between them, and they parted. Life has shown that Tamatyan's approaches were more justified, because force has always been and remains the best way to make a Turk to understand something.

Key words. Hnchakyan party, politicians, national liberation struggle, reorganized party, Arpiarian, Tamatyan, ideological differences

1890-ականների կեսից Հնչակյան կուսակցությունը ճգնաժամ էր ապրում: Հետապնդումներից խուսափելով կուսակցության շատ գործիչներ՝ հեռացել էին երկրից: Հատկապես Մ. Տամատյանի ու Ա. Արփիարյանի գլխավորությամբ նրանք դժգոհ էին կուսակցության ցուցադրական գործելաձևից, Նազարբեկ ամու-

սիների մենատիրությունից (այս մասին պատկերացում են տալիս Տամատյանի, Արփիարյանի, Ռշտունու և Ապահի նամակները [1] և հանգանակված գումարների անհայտ ճակատագրից: Հայ նշանավոր հասարակական-քաղաքական գործիչներ Մ. Տամատյանի և Ա. Արփիարյանի մասին քիչ է գրվել: Եթե վերջինիս

գործունեության մասին մի քանի, հիմնականում գրականագիտական, ուսումնասիրություններ այնուամենայնիվ կան [5; 6; 7; 9; 10] ապա հայ ազգային-ազատագրական պայքարի նվիրյալ Մ. Տամատյանին շատ քիչ աշխատություններ են նվիրված [8; 11]: Այդ պատճառով էլ հնչակյանների ու հատկապես վերջիններիս վերաբերող շատ հարցեր լուսաբանման կարիք ունեն: Նրանք թեև տևական ժամանակ հասարակական-քաղաքական և կուսակցական համատեղ գործունեություն են ծավալել, սակայն որոշ հպանցիկ հիշատակումներից բացի այդ մասին հայ պատմագիտության մեջ որևէ անդրադարձ չկա: Ներկա հոդվածն այդ բացը լրացնելու փորձ է:

Տարածայնությունների հիմնական պատճառը կուսակցության **ծրագրում ամրագրված սոցիալիզմի թեզն էր¹**: Մ. Տամատյանը, Ա. Արփիարյանը, Մ. Սվազյան, Լ. Մկրտչյան, Ս. Սուրենյան, Կ. Փափազյան և ուրիշներ, գտնելով, որ Թուրքիայում արդյունաբերական պրոլետարիատի բացակայության պայմաններում սոցիալական պայքարը հեռանկարային չէ, և որ այն «ավելորդ ու վնասակար է Հայկական հարցի լուծման համար», հանդես եկան միայն ազգային-ազատագրական պայքար մղելու պահանջով՝ միաժամանակ ձգտելով հայկական հարցը լուծել հնչակյան կուսակցության ծրագրի ոգով: Հակասոցիալիստական դիրքորոշում ունեին հիմնականում արևմտահայ հնչակյանները, որոնք կենտրոնից պահանջեցին ընդհանուր ժողով գումարել: Արևմտահայ հնչակյանները դեմ էին, որ արևմտահայերի ազատագրության անունով հավաքված դրամը ծախսվեր սոցիալիզմի քարոզչության համար և պահանջում էին հրաժարվել սոցիալիզմի գաղափարից, որը վնասակար էր հայ դատի համար և հայ ժողովրդին դասակարգերի բաժանելու գաղափարից, քանի որ այն ջրատում էր ազգի ուժերը. «Մենք մեր մեջքն պետք է հանինք ինչ-որ ընդհանուր ազգային հանգամանք չունի: Կրոնական խնդիր, տնտեսական հարցեր պետք է ջնջել» [3]: Քանի որ կուսակցության ղեկավարները արևելահայեր էին և լավ չգիտեին արևմտահայ իրականությունը, հետևաբար կուսակցությունը պետք է ղեկավարեն արևմտահայ գործիչները:

Կացությունը վերլուծելու համար **1896 թ. հունվարին Ա. Արփիարյանը, Ա. Օհանջանյանը,**

Գ. Չիթենյանը, Եգիպտոսից Ա. Ռշտունին, Չեյթունի գործիչներից Աղասին, Ապահը, Հրայան, Մլեհը, Նշանը և Կարապետը և ուրիշներ **Լոնդոնում** հավաքվում են **պատգամավորական ժողովի**: Նրանք Նազարբեկին և կենտրոնի մյուս անդամներին մեղադրեցին անխոհեմ և ցուցադրական ելույթներ կազմակերպելու համար, որոնք նոր բռնությունների ու ջարդերի առիթ էին դարձել և պահանջեցին այդուհետ խիստ գաղտնապահ և զգույշ գործել:

1896թ. օգոստոսի 8-20-ին Մ. Տամատյանի և Ա. Արփիարյանի կողմնակիցները (Նազարբեկը նրանց կոչեց «Ալֆարիական»²) համագումարի ընթացքում մանրակրկիտ քննարկեցին մինչ այդ ունեցած գործունեությունը և «առաջ քաշեցին կուսակցության ապակենտրոնացման խնդիրը [2] և **ժողովին** ներկա 19 պատգամավորները միաձայն ընտրեցին «Դիւան՝ Ատենապետ՝ Մ. Սրվազեան, **Ատենադպիր՝ Մ. Տամատեան**» [13, թիվ 17, 16 նոյեմբերի, 1896]:

Կուսակցության ծրագիրը վերանայվեց, դրանից դուրս թողնվեց սոցիալիզմի դրույթը և միակ նպատակը համարվեց արևմտահայության քաղաքական անկախության համար պայքարը. «պետք է իր գործունեությունը նուիրել միմիայն ազգային դատին, **առանց իր ծրագրին մեջ նա. խապատուութիւն տալու ունէ տնտեսական դպրոցի**, կրոնական դաւանանքի, քաղաքական համոզումի» [13, թիվ 17, 16 նոյեմբերի, 1896]: Մերժվեց ցուցարարական գործունեությունը և կուսակցության օրգան «Հնչակը» հրատարակել նոր ծրագրի ոգուն համապատասխան:

Քանի որ դատարանի վճռով «Հնչակը», որպես մասնավոր սեփականություն տրվեց Նազարբեկին հնչակյան արևմտահայերի թեք սկսեց հրատարակել «Մարտ» թերթը, որի հրատարակության, խմբագրության, հոդվածներ գրելու հիմնական ծանրությունը ընկավ Ա. Արփիարյանի ուսերին: Նրան սատարում էին «**Մ. Տամատեան, Ռշտունի, Մ. Սվազեան, Յ. Օհանջանեան** և դրանց գործակիցներ», որոնք Նազարբեկյանների կողմից՝ «**հռչակվում են Կուսակցութիւնիցս արտաքսված**» [13, թիվ 18, 28 սեպտեմբերի, 1896]: **Նրանք էլ** հայտարարում են նազարբեկյաններից բաժանվելու և նոր հնչակյան կուսակցություն ստեղծելու մասին. «Ի վերջո որոշեցին բաժնուիլ Մայր ճիւղէն և գուտ ազգային խոհեմ և հեռատես ազգային գործունեութեան մը ծրագրով կազմել առանձին խմբակցութիւններ՝ «Վերակազմեալ Հնչակեան» յորջորջումով» [14], իսկ 1898 թվականից՝ «Վերակազմյալ Հնչակյան կուսակ-

¹ Ա. Նազարբեկի հեղինակած Հնչակյան կուսակցության ծրագիրն առաջի անգամ հրատարակվեց «Հնչակ» թերթում, 1888 թ. 11 և 12-րդ միացյալ համարում: Այն ուներ ստորադաս երկաստիճան կառուցվածք և փաստորեն բաղկացած էր երկու մասից՝ մոտակա և հեռավոր նպատակադրումներից: Մոտակա նպատակը ամբողջովին նվիրված էր ազգային հարցին, ըստ որում դրա գործադրման ոլորտը բացառապես Արևմտյան Հայաստանն էր: [12, էջ 22-24]

² «Շատերը կարծեցին թէ այս անուանակոչութիւնը կը նշանակէր Արփիարական, մինչդէռ իրականութիւնն այն է, որ գործիչներու յանձնախումբը ինք իր հասցէին տուած էր Անտոն Ռշտունիի անուան յունական սկզբնատառերով Ալֆարի (փոխանակ Ալֆառո-ի) անուանումը: [4, էջ 96-97]

ցություն» անվամբ: Վերակազմյալ հնչակյանների կազմակերպական կառույցը նույնն էր, ինչ Հնչակյան կուսակցությանը, սակայն հետագայում կրել է որոշակի փոփոխություններ:

Վերակազմյալները նաև մշակում են 61 հոդվածից բաղկացած հիմնական կանոնագիր և «միաձայնությամբ վճռում Կուսակցությանը ծրագրեն բոլորովին ջնջել ընկերվարական յայտագիրը և Կուսակցությանն ապատակը միմիայն ազգային փրկությունը ընել» [13, թիվ 17, 16 նոյեմբերի, 1896]: **Սակայն շատ հնչակյաններ երկու թևերին էլ քննադատեցին և դատապարտեցին կուսակցության պառակտումը** [2, գործ 33, թ.5]:

Ստեղծվում է «հինգ անձերէ բաղկացած Կեդրոնական վարչություն մը» [1, գործ 7, թ.2] որի անդամներ են ընտրվում Մ. Տամատյանը, Ա. Արփիարյանը, Մուրեն Մուրենյանը, Լևոն Մկրտչյանը, Միհրան Սվազյանը [2, գործ 33, թ.5]: Քանի որ Մ. Սվազյանը բնակվում էր Կիպրոսում, իսկ Լ. Մկրտչյանը՝ Ալեքսանդրապոլում, որոշվեց, որ նրանք նամակագրության միջոցով կկատարեն իրենց պարտականությունները: Որոշվեց, որ Մ. Մուրենյանն էլ դրամահավաք կազմակերպելու համար մեկնի Ամերկա: Այնպես որ, կուսակցության կենտրոնում մնացին Մ. Տամատյանն ու Ա. Արփիարյանը:

Գաղափարական բախում Արփիարյանի և Տամատյանի միջև:

Կենտրոնի բացակա անդամների թղթակցությունները և մասնաճյուղերի հետ հաղորդակցությունները և նրանց տրվելիք հրահանգները, որոնք վերակազմության սկզբնական շրջանում ամենաբարդ ու դժվար գործն էր, հիմնականում կատարում էր Մ. Տամատյանը³, իսկ Ա. Արփիարյանը զբաղված էր «Մարտի» խմբագրությամբ: Ավելին, վերջինս մտածում էր ևս մեկ՝ «Նոր կեանք» պարբերական հիմնելու մասին:

Մ. Տամատյանը դեմ եղավ այդ ձեռնարկին՝ բացատրելով, որ «Կուսակցության Կեդրոնը խմբագրատուն մը չէ, այլ յեղափոխական ղեկավար մարմին մը» [8, էջ 100]: Իսկ Ա. Արփիարյանը գտնում էր, որ այդ պարբերականներով ոչ միայն կուսակցականներին կոզևորի և ազգաշահ գործերի կմոխի, այլև կուսակցության համար նյութական միջոցներ կապահովի: Մ. Տամատյանը փորձում էր համոզել Ա. Արփիարյանին, որ նոր պարբերականի հրատարակությունը մեծ ռեսուրսներ կլիսի և կկազմալուծի հեղա-

փոխական գործունեությունը: Բոլոր միջոցները փորձելուց հետո Մ. Տամատյանը սպառնաց հրաժարվել կենտրոնի անդամությունից, եթե Ա. Արփիարյանը շարունակեր հետամուտ լինել իր ձեռնարկին: Ա. Արփիարյանը հույս ուներ Լոնդոնում գտնվող Լևոն Բաշալյանի և նամակագրության միջոցով Արշակ Չոպանյանի օգնության վրա, շարունակեց ջանքեր գործադրել «Նոր կեանքը» հրատարակելու համար: Ստիպված վերջիններս իրենց տեսակետները ներկայացրին կենտրոնի բացակա ընկերներին: Սակայն նրանցից դեռևս որևէ պատասխան չստացած, իբրև թե Ա. Չոպանյանի կողմից հրավիրված լինելով Ա. Արփիարյանը մեկնեց Փարիզ և «7-8 օր մնալէ ետք վերադարձաւ Լոնտոն հետը բերելով տպագրական կարգ մը կազմածներ» [8, էջ 100-101], որոնք պետք է ծառայեին «Նոր կեանքը» հրատարակելուն:

Մ. Տամատյանի համբերությունը գրեթե սպառված էր ու հենց այդ օրերին Կ.Պոլիսից ոմն Ասլանյան, ով տեղի հնչակյան մասնաճյուղի կնիքով դրամի պահանջով սպառնագիր էր ստացել, դիմել էր եղբորը, որպեսզի վերջինս այցելի կուսակցության կենտրոն և պարզի ինդիքը: Համեմատելով սպառնագրի վրա եղած և կենտրոնում գտնվող կնիքները Մ. Տամատյանը նկատում է դրանց այդ Ասլանյանին բացատրում է, որ «թուղթին հեղինակները Հնչակեան կուսակցության նոր կազմին (այսինքն՝ իրենց-Մ.Ս.) մաս չեն կազմեր» [8, էջ 101] և որ իրենք դատապարտում են սպառնալիքով դրամ պահանջելու պրակտիկան: Սակայն սպառնագիրը տեսնելուց հետո Ա. Արփիարյանը չժխտելով, որ դրա հեղինակներն էլ «հնչակեանի պէս բան մըն են» Մ. Տամատյանին ասում է. «Գիտես մեր նիւթական նեղութիւնը, մենք պէտք է օգտուինք այս սպառնագրի պատեհութենէն» [8, էջ 102]: Մ. Տամատյանն այդ մասին տեղյակ է պահում կենտրոնի բացակա ընկերներին և օրյէկտիվ լուծում չտրվելու պարագայում սպառնում է հրաժարական ներկայացնել:

Իր հերթին Ա. Արփիարյանը մեղադրում է Մ. Տամատյանին դաշնակցությանը համակրելու համար և շեշտում, որ իբր նա կուսակցությունից հրաժարվում է ՀՅԴ-ին անդամակցելու նպատակով: Շուտով Լևոն Բաշալյանի և Արշակ Չոպանյանի օժանդակության նա կարողացավ նաև գլուխ բերել «Նոր կյանքի» հրատարակությունը և 1898թ. լույս տեսավ թերթի առաջին համարը: Մ. Տամատյանը, որ նախկինում սպառնացել էր կուսակցությանը վնասող քայլերը չկանխելու դեպքում հրաժարական տալ, անմիջապես հետո ներկայացնում է իր հրաժարականը և և մեկնում «կուսակցության կեդրո-

³ Տարբեր մասնաճյուղերի և գաղափարակից ընկերների հետ Մ. Տամատյանը կապն իրականացնում էր հիմնականում նամակների միջոցով: Մեզ հաջողվեց Ե. Չարենցի անվան Գրականության և արվեստի թանգարանի (ԳԱԹ) Ա. Արփիարյան ֆոնդում (516) գտնել Մ. Տամատյանի Ա. Արփիարյանին հասցեագրված ութ և գործընկերներին (943) վեց նամակներ:

նատեղէն որ միանգամայն իր բնակավայրն էր» [8, էջ 102]:

Կենտրոնի բացակա անդամները՝ մեծ հույսեր կապելով Ա. Արփիարյանի խմբագրական կարողությունների հետ, անհրաժեշտ կարևորություն չտվեցին «Նոր կեանքի» հրատարակության դեմ Մ. Տամատյանի առարկություններին: Ոչ էլ լուրջ ուշադրության արժանացրին Մ. Տամատյանի Ա. Արփիարյանի կողմից ըմբոստների հետ գաղտնի գորցակցելու մեղադրանքին: Կենտրոնի անդամ Լ. Մկրտչյանը՝ որևէ իրական հիմք անգամ չունենալով, հավատում է Ա. Արփիարյանի այս ամբաստանությանը և ծանր մի պատասխան է գրում Մ. Տամատյանի հրաժարականին:

Ստեղծելով նոր հնչակյան կուսակցություն, Մ. Տամատյանը, Ա. Արփիարյանը և մյուսները սկզբից և եթե **աշխատում էին միավորվել ՀՅԳ-ի հետ**: Այդ միավորվելու ձգտումը նոր հնչակյանների շարքերում գնալով ավելի էր ուժեղանում և մեծանում էր միավորման կողմնակիցների թիվը: Դեռ 1896թ. նոյեմբերին Ապահին գրած նամակում հնչակյան Իսրայելն առաջ էր քաշում Դաշնակցության հետ միության խնդիրը [1, գ.53, թ.6]: Ինքը **Ա. Արփիարյանն էլ** արևմտահայերի ազատագրական պայքարի հաջողության գրավականներից մեկը **համարում** էր ազգային կուսակցությունների միջև համաձայնության կայացումը. «ազգին գլուխ եկած փորձանքներուն մեկ մեծ մասը այդ պատակտումին պատճառով է, որը շատ վնասակար եղած է ազգին դատին համար» [3, N 71, թ.2]: Ա. Արփիարյանն առաջադրում էր նաև կուսակցական **գաղտնապահության հույժ կարևոր հարցը**, իրավացիորեն նկատելով, որ դա ցանկացած ձեռնարկման հաջողության գրավականն է [3, N354, թ.2-3]:

Հրաժարական տված Մ. Տամատյանը **շուրջ յոթ ամիս կենտրոնում մնալուց հետո** պատրաստվում էր մեկնել Ամերիկա, երբ Եգիպտոսից կուսակցության երկրորդ պատգամավորական ժողովին մասնակցելու հրավեր ստացավ: Այդ ընթացքում «Արփիար՝ Լոնտոնի «Նոր Կեանք»ին մէջ «գրականութիւն» կ'ըներ: Մ.Տամատեան, Լ.Մկրտչեան, Լ.Ռշտունի, յուսահատ թէ՛ Նագարբէկէն և թէ Արփիարէն, Եգիպտոս քաշուած էին, ուր իրենց ամբողջ աւիւնը (մանաւանդ Տամատեանինը) կը սպառէր՝ Լ.Մկրտչեանի պաշտպանած «աղայական» թաղականութեանց դէմ պայքարելով» [8, էջ 112]: Որպեսզի ինքը չներկայացվի պատասխանատվությունից խուսափող, իսկ Ա. Արփիարյանն էլ բացարձակ արդարացի, 1897 թ. վերջին Մ. Տամատյանը մեկնում է Ալեքսանդրիա և ընդհանուր ժողովում բարձրացնում է «Նոր կյանքի» հրատարակության նպատակահարմարության հարցը, սակայն

կենտրոնի անդամները պաշտպանում են Արփիարին: Ի դեպ հենց այս 1898 թ. Հոկտեմբերի 9-11-ը Ալեքսանդրիայում տեղի ունեցած **ընդդիմադիր հնչակյանների 2-րդ պատգամավորական ժողովում կուսակցությունը Վերակազմյալ հնչակյան անվանվեց**: Կենտրոնի որոշումով Ա. Արփիարյանը ևս պետք է զար Եգիպտոս, քանի որ Ա. Արփիարյան-Մ. Տամատյան հակասությունների խնդիրը պիտի քննարկվեր:

Պատգամավորները միաբերան պնդեցին, որ ժողովի գաղտնիքները ոչ մեկի և նույնիսկ կուսակցության մասնաճյուղերին տեղյակ պահելը նպատակահարմար չէ: Այդ մեկնաբանությունը Մ. Տամատյանն ընդունեց և նախընտրեց ժողովարարից մեկնել: Որոշ քննարկումներից հետո անուշադրության մատնելով Մ. Տամատյանի առարկություններն այդ հարցի վերաբերյալ՝ կենտրոնի անդամները Ա. Արփիարյանի «Նոր Կեանք» հրատարակելուն ի նպաստ են արտահայտվում: Ավելին, նրանք անտեսելով նախորդ ընդհանուր ժողովի որոշումը, ոչ միայն չեն դատապարտում Ա. Արփիարյանի ծայրահեղականների հետ գործակցությունը, այլև նրանց վերստին ընդունում են կուսակցության շարքերը, պատճառաբանելով, որ վերջիններս «վճռական եւ յանդուգն յեղափոխականներ էին» [8, էջ 112]:

Ժողովն ընդունում է երկու կարևոր որոշում: Դրանցից առաջինը կենտրոնի պաշտոնաթերթ «Նոր Կեանք» թերթի հրատարակության խնդիրն էր և երկրորդը՝ «ծայրայեղականներու կուսակցութեան շարքերուն մէջ ընդունուիլը, կը բանային կուսակցութեան եւ Տամատեանի տեսակէտներուն միջեւ լայն խրամատ մը, որով Տամատեան ինքզինք յայտարարեց կուսակցութենէն հրաժարած» [8, էջ 112]: Ընտրվում է նոր կենտրոնական վարչություն, որի անդամներն էին Մ. Սվազյանը, Կ. Փափագյանը, Ապահը, Լ. Մկրտչյանը, Ա. Արփիարյանը, Հովհ. Շահնազարը: Ատենապետ է ընտրվում Կ. Փափագյանը, ատենադպիր՝ Ա. Արփիարյանը [1, գործ 70, թ. 31]:

Տամատյանը 1898 թ. կայացած կուսակցության ընդհանուր պատգամավորական ժողովում, իսկ 1901 թ. մի շարք պատճառներով նաև Ա. Արփիարյանը դուրս եկան կուսակցությունից: Ավելի ուշ՝ 1906 թ. ութ տարվա մեկուսացումից հետո Տամատյանը կրկին համարում է կուսակցության շարքերը, իսկ Ա. Արփիարյանը դավադիրների կողմից 1908 թ. սպանվում է:

Եզրակացություններ

1. Մ. Տամատյանն ու Ա. Արփիարյանը լինելով արևմտահայեր և իրենց մաշկի վրա կրելով թուրքական բռնատիրության հալածանքները գրեթե միաժամանակ զինվորագրվեցին XIX

դարի վերջին քառորդից լայն թափ հավաքած արևմտահայ ազգային-ազատագրական պայքարին և այդ պայքարը կազմակերպելու ու ղեկավարելու առաջինը ասպարեզում հայտնված Հնչակյան կուսակցությանը:

2. Լավ հասկանալով, որ միջնադարյան մակարդակում գտնվող օսմանյան իրականության դեմ պայքարում սոցիալիզմի գաղափարախոսությունը ժամանա-կավրեպ է, նրանք մի շարք այլ համախոհների հետ պայքար ծավալեցին այդ թեզը կուսակցության ծրագրից հանելու համար և այդ տարաձայնության հենքի վրա բաժանվեցին ու ստեղծեցին Վերակազմյալ հնչակյան կուսակցությունը:

3. Քանի որ Արփիարյանն այդ պայքարի լավագույն մեթոդ էր համարում հրապարակախոսական գործունեությունը, իսկ Տամատյանը՝ գործնական, կազմակերպված ու զինավարժված խմբերով ապստամբական գործառույթները, նրանց միջև գաղափարական ներհակություններ առաջացան: Կյանքը ցույց տվեց, որ Տամատյանի մոտեցումներն ավելի արդարացված էին, որովհետև թուրքին որևէ բան հասկացնելու լավագույն միջոցը միշտ էլ զորավոր ուժն է եղել և է:

4. Երկու նվիրյալների կյանքն ու գործունեությունը շատ ուսանելի կողմեր ունեն սերունդների համար և արժանի ավելի խորը և բազմակողմանի ուսումնասիրության:

Վկայակոչված աղբյուրներ և գրականություն

1. ՀԱԱ, Ապահ Պետրոսյանի ֆոնդ, 453, ցուցակ 1, գործ 6, թերթ 1: ցուցակ 1, գործ 7, թ.2: ցուցակ 1, գործ 70, թ. 31: ցուցակ 1, գ.53, թ.6:
2. ՀԱԱ, ֆոնդ 4045, ցուցակ 1, գործ 35, թ. 4: ցուցակ 1, գործ 33, թ.5:
3. ԳԱԹ, Ա. Արփիարյանի ֆոնդ, թիվ 23, թ. 1: թիվ 71, թ.2: 354, թ.2-3: թիվ 516, թերթ 1-15, 943, թերթ 1-13:
4. **Տամատյան Մ.**, Իմ հուշերս, Պեյրոյթ, 1985:
5. **Վվազյան Հ.**, Արփիար Արփիարեանի սպանությունը, Կահիրե, 2018, 155 էջ:
6. **Հակոբյան Ս.**, Արփիար Արփիարյան: Կյանքն ու գրական գործունեությունը, Վիեննա, 1922:
7. **Ստեփանյան Գ.**, Արփիար Արփիարյան, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., 1955, 289 էջ:
8. Պ. Տեփոեանի Միհրան Տամատեան (1863-1945): – Պեյրոյթ, 1964
9. Մուրադյան Լ., Արփիար Արփիարյան: Կյանքը և ստեղծագործությունը, Ե., 1991:
10. **Հովհաննիսյան Գ.**, Արփիար Արփիարյան. Հասարակական-քաղաքական հայացքներն ու գործունեությունը, Ե., 2019, 277 էջ
11. **Սարգսյան Ս.**, Մ. Տամատյանի հրապարակախոսությունը, Ե., 2020:
12. **Խուրշուդյան Ռ.**, Հնչակյան պարբերական մամուլը. սկզբնավորման շրջան, Պատմաբանասիրական հանդես, թիվ 2(18), 2000, էջ 22-24:
13. «Հնչակ» թերթ, թիվ 11 և 12-րդ միացյալ համար, 1888, թիվ 16, 17, 18, 28, 1896
14. «Չարթօնք» թերթ, թիվ 252(3641), 1949, 17 սեպտեմբերի, 1949:

Сдана/Հանձնվել է՝ 24.03.2021
 Рецензирована/Գրախոսվել է՝ 26.03.2021
 Принята/Ընդունվել է՝ 30.03.2021